2(059)
Ч-14

596

# 1932

# ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ ՄՇՏԱՑՈՒՆ

*Սրբազան Մտածմունքներով Համեմուած*

(ՆՈՐ ՏԱՐՒՈՅ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ)

«Ցուցուր ինծի, ով Տէր, իմ վերջս, եւ օրերուս չափը ո՛րչափ է, որ գիտնամ թէ ի՛նչպէս անցաւոր եմ»: Սաղմ. ԼԹ. 4:

**Դ. ՏԱՐԻ**



«ԵՍ ԵՄ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍԸ». Յովհ. Ը. 12:

*ԳԻՆԸ՝ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՄԱՐ 3 ՖՐ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ՝ 4 ՖՐ.*
*ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ 25 ՍԷՆԹ:*

Gh. Der Ghazarian, B. P. 165, ALEP, (Syrie)

2(059)
2-14
03 AUG 2009

2(059)
Հ-14
596

# ՅՈՒՆՈՒԱՐ 1932 JANUARY

Շարական — *Անսկիզբ Էակից բանդ Հօր որ էիր յառաջ քան զյաւիտեանս, և եկիր 'ի փրկութիւն ըստեղծուածոց քոց, ըզՔեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց: Ծընար ի կուսէ անճառ միութիւն անբաժանելի և միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ, ըզՔեզ...: Ցնծութեամբ տօնեցուք ըզԾնունդ Քո Սբ. որ յայտնեցար մեզ, լոյս ի լուսոյ և լուսով Քո լըցեր ըզտիեզերս, ըզՔեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց:*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1* | 2 |
| 3 | 4 | 5 | 6‡ | 7 | 8 | 9* |
| 10 | 11 | 12 | 13+ | 14+ | 15 | 16 |
| 17+ | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23+ |
| 24 / 31 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30+ |

**ԿԻՐ. ԴԱՍԵՐ.—** (*Ա. ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ*):

| | | Ոսկ. համ.: |
|---|---|---|
| 3. Աբրահամ երբ ուղեցոյց— | Ծննդ. ԺԱ. 31: ԺԲ. 1—9: | Եբր. ԺԱ. 9: |
| 10. Ղովտին բարեկամը— | » ԺԳ. 2—18: ԺԴ. 13—16: | Առակ. ԺԷ. 24: |
| 17. Զոհողութեան Նոր ճամբան— | » ԺԵ. 15. 16, 19: ԻԲ. 1—18: | Մարկ. ԺԲ. 32. 33: |
| 24. Եղիազար և անտեսանելի Առաջնորդը— | » ԻԴ. 1—67: | Առակ. Գ. 6: |
| 31. Յակոբ և Եսաւ — կռիւը— | » ԻԵ. 27—34: ԻԷ. 41—45: ԻԸ. 10,22: | » ԺԸ. 19: |

## ԱՅՍՕՐ ՏՕՆ Է (Ղուկ. Բ. 11:)

*Այսօր Տօն է Ծննդեան Աւետիս, Տեառն մերոյ և յայտնութեան Աւետիս. Աւետիս:*
*Այսօր արեւն արդարութեան Աւետիս, երեւեցաւ ի մէջ մարդկան Աւետիս. Աւետիս:*
*Այսօր Սուրբ Կոյսն անապական Աւետիս, ծնաւ երեր զանմահ Արքայն Աւետիս. Աւետիս:*
*Այսօր հրեշտակք յերկնից իջան, Աւետիս, ընդ մեզ օրհնեն զանմահ Արքայն Աւետիս, Աւետիս:*
*Այսօր դժոխքըն սարսեցան, Աւետիս, գունդըք դիւաց յոյժ տրտմեցան, Աւետիս, Աւետիս:*

(Տարական)

**ՏՕՆԵՐ—** 1 Կաղանդ եւ տարեմուտ, 6 Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն, 9 Ռամազան Իսլամաց (30 օր), 13 Տօն անուանակոչութեան, 14 Ս. Յովհ. Կարապետ, 17 Առաջ. բարեկենդան, 23 Սբ. Սարգիս զօրավարին, 30 Սբ. Սահակ Պարթեւի:

63357-67

ՀՍՍՀ-Арм ССР
ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

29.05.2013

# ՓԵՏՐՎԱՐ 1932 FABRUARY

Յիսուսի խնդրանքը.— *Ով Հայր, անոնք որ դուն ինծի տուիր՝ կուզեմ որ ուր որ ես եմ, անոնք ալ իմ հետս ըլլան, որպէսզի դիտեն իմ փառքս՝ որն որ դուն ինծի տուիր. վասնզի դուն զիս սիրեցիր աշխարհիս սկիզբէն առաջ . . . եւ քու անունդ անոնց ճանչցուցի, ու պիտի ճանչցնեմ . . .։— Յովհ. ԺԷ. 24, 26։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4* | 5 | 6+ |
| 7** | 8+ | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| 14+ | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28 | 29 | | | | | |

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԴԱՍԵՐ

Ոսկ. համ.:

7. *Յակոբ լուսագոյն կերպը կը սորվի։— Ծննդ. ԻԹ. 1—20։ Լ. 25—28։ ԼԲ. 3։ ԼԳ. 17։* *Եփես. Դ. 32։*
*—(Բ. Յիսուս մարդկութեան առաջնորդը)։—*
14. *Առաջնորդը իր պայքարը կը մղէ։— — Մատթ. Դ. 12—25։* *Փիլ. Բ. 6, 7։*
21. *Առաջնորդը տառապողներուն կը ծառայէ։ » Ը. 1—13։* *Մատթ. Ը 17։*
28. *Առաջնորդը վախը մէկդի կը դնէ։— — » Ը 23—34։* *Բ. Տիմ. Ա. 7։*

## ՅԻՍՈՒՍԻ ԳՏՆՈՒԱԾ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՎԱՅՐԵՐԸ

*—Մսուր — Ղուկ. Բ. 12, 16։*
*—Տաճար — » » 46—50։*
*—Անապատ — Մարկ. Ա. 12, 13։*
*—Յորդանան— Մատթ. Գ. 13—17։*
*—Հերմոն — » ԺԷ. 1—8։*
*—Երուսաղէմ— » ԻԱ. 1—11։*
*—Վերնատուն— Ղկ. ԻԲ. 7-20։ Յվհ. ԺԳ. 1-30։*
*—Գեթսեմանի — Մատթ. ԻԶ. 36—46։*
*—Գողգոթա — Յովհ. ԺԹ. 17—30։*
*—Գերեզման — » » 38—42։*
*—Ջիթենեաց —Մթ. ԻԸ. 16-20։ Գծ. Ա. 4-11։*
*—Պատմոս — Յայտ. Ա. 10—20։*
*—Աստուծոյ աջը — Գործք. Է. 55։*
*—Սրտերու մէջ — Եփես. 9. 16, 17։*

**ՏՕՆԵՐ.—** 4 Սրբոց Վարդանանց. 6 Կ. Պոլսոյ ժողովոյն՝ 150 Հայրապետաց. 7 Բուն բարեկենդան. 8 Մեծ պահք եւ Ռամազան Պայրամ (3 օր). 14 Տեառնընդառաջ։

# ՄԱՐՏ 1932 MARCH

Աստուծոյ խոստումին համար.— *Եւ հիմա, ով Տէր Աստուած, քու ծառայիդ ու անոր տանը համար ըսած խօսքդ յաւիտեան հաստատէ և ըսածիդ պէս ըրէ, և քու անունդ յաւիտեան մեծ ճանչցուի, ու ըսեն թէ, Զօրութեանց Տէրը՝ Իսրայէլին վրայ Աստուած է... քանզի, ով Տէր Եհովա, դուն գրուցեցիր . . .։ Բ. Թագ. Է.* 25, 26, 29։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2+ | 3 | 4 | 5+ |
| 6 | 7 | 8* | 9 | 10 | 11 | 12+ |
| 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19+ |
| 20‡ | 21 | 22 | 23 | 24‡ | 25‡ | 26 |
| 27‡ | 28 | 29 | 30 | 31 | | |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՅԻՍՈՒՍ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ)* Ոսկ. համ.:

6. *Առաջնորդը հակառակութեանց կը դիմագրաւէ— Մատթ. ԺԲ.* 9—28։ *Մատթ. Ժ.* 38
13. » *կը ճանչցուի և կը փառաւորուի—* » *ԺԶ.* 13—*ԺԷ. 9*։ *Մատթ. ԺԶ.* 16։ *ԺԷ.* 5։
20. » *իր քաղաքը կու գայ—* » *ԻԱ.* 1—17։ *Զաք. Թ.* 9։
27. *(Զատիկ) միշտ ներկայ եղող առաջնորդը- Մատթ. ԻԷ.* 11—14, 26—61։ *ԻԸ.* 1—10, 16-20։ *Յայտ. Ա* 18։

## ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

*—Իմ Հօրս խոստմունքը ձեր վրայ կը ղրկեմ—* *Ղուկ. ԻԴ.* 49։ *Յովհ. ԺԴ.* 16։
*—Խաղաղութիւն կը թողում ձեզի, իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի—* » » 27։
*—Ձեզ որբ չեմ թողուր, կու գամ ձեզի—* » » 18։
*—Հիմա կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ—* » » 2։
*—Նորէն կ'ուգամ ու ձեզ քովս կ'առնեմ—* » » 3։
*—Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը—* *Մատթ. ԻԸ.* 20։

ՏՕՆԵՐ.— 2 Միջինք պահոց. 5 Քառասուն Մանկունք. 8 Սուրիոյ Հանրապետութիւն. 12 Մուտն ի վիրապն Ս. Գր. Լուսաւորչի. 19 Յիշ. Ղազարու յարութեան. 20 Ծաղկազարդ. 24 Յիշ. Տեառն ընթրիքին եւ Ոտնլուայի. 25 Յիշ. չարչարանաց Յիսուսի Քրիստոսի. 27 Զատիկ կամ Սբ. Յարութիւն Յիսուսի Քրիստոսի:

# ՅԻՍՈՒՍԻ ՎՐԱՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

(ԷՐՆԷՍԹ ՐԸՆԱՆ)

*Հանգստացիր այսուհետեւ Քո փառքում, ազնիւ Ուսուցիչ։ Քո գործը աւարտած է, քո աստուածային լինելը ապացուցուած։ Մի՛ վախնար, որ քո ջանքերով ստեղծուածը կարողանայ կորչիլ որ և է սխալմունքից։ Այսուհետեւ աշխարհային անոտի յարձակումների համար անմատչելի, դու քո աստուածային հանգստի բարձրութիւնից կը դիտես քո գործերի վախճան հետեւանքները։ Մի քանի ժամուց տանջանքի գնով, որը նոյն իսկ քո մեծ հոգու վրայ չազդեց, դու անմահութիւն ձեռք բերիր։ Հազարաւոր տարիներ աշխարհս կ'ոգեւորուի քեզանով։ Մեր հակասութիւնները ըմբերանող, դու կը լինիս այն դրօշը, որի շուրջը պէտք տեղի ունենան ամենա արիւնահեղ կռիւները։*

*Քո անունը, որ հազար անգամ աւելի սիրելի ու հզօր դարձաւ քո մահից յետոյ, քան թէ էր քո երկնային կարճատեւ գոյութեան ժամանակ, կը լինի մարդկութեան համար մի անկիւնաքար, որին տեղից շարժիլը կը նշանակէր խախտել հէնց տիեզերքի հիմքերը։ Քո և Աստուծոյ միջև տարբերութիւն չի լինիլ։ Յաղթահարեցիր մահը. տի՛րիր ուրեմն քո թագաւորութեանը, ուր պիտի դիմէ քո գծած արքայական ճանապարհով, երկրպագուների անհամար բազմութիւնը։*

* * *

*—Աստուծոյ ճշմարիտ որդւոց մեծ գերդաստանին մէջ առաջին տեղը տալու ենք Յիսուսին։ Յիսուս ոտ աչօք տեսիլներ չունեցաւ. Աստուած անոր հետ դրսէն չխօսեցաւ, Աստուած անոր ներսիդին էր։ Յիսուս Աստուծոյ ծոցին մէջ կ'ապրէր, և անընդմիջական հաղորդութիւն ունէր Անոր հետ։ Ամէնաբարձր աստուածագիտութիւն որ երբէք գտնուեցաւ մարդոց կրծոց մէջ՝ Յիսուսինն էր։ Յիսուս անհման և պաշտելի է, որուն աշխարհ ընծայած է Որդի Աստուծոյ տիտղոսը։*

# ԱՊՐԻԼ 1932 APRIL

Գովասանք մը— Դուն մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ ես, քու շրթանցդ վրայ շնորհք թափուած է, անոր համար Աստուած քեզ օրհնեց յաւիտեան։ Քու անունդ յիշատակել պիտի տամ ազգէ մինչեւ ազգ, անոր համար ժողովուրդները քեզ պիտի գովեն յաւիտեանս յաւիտենից։— Սաղմ. ԽԵ. 2, 17։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 |
| 3 | 4 | 5 | 6 | 7+* | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15* | 16* |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24*+ | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |

ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴԸ ՆԱԵՒ, ՄԵԾ ՈՒՍՈՒՑԻՉ ՄԸ)։ — Ոսկ. համ.:

| | | |
|---|---|---|
| 3. Ուսուցիչը ու՞ր կը գտնէ իր պատմութիւնը։ | Մատթ. ԺԳ. 31—34, 44—48։ Է. 24—29։ | Մատթ. ԺԳ. 34։ |
| 10. Տալ առանց ուշադրութիւն գրաւելու։— — | » ԻԲ. 1—10։ Ղուկ. ԺԴ. 12—24։ | » Զ. 3։ |
| 17. Զատրուիլ ուրիշէ։— — — — — — — — | » ԻԳ. 1—12։ » » 7—11։ | Հռովմ. ԺԲ. 10։ |
| 24. Ողորմած ըլլալ։— — — — — — — — | Ղուկ. Ժ. 29—39։ | Ղուկ. Զ. 36։ |

## ՅԻՍՈՒՍԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Մարդոց որդիներէն աւելի գեղեցիկ։— Անոր քիմքը քաղցր ու ինք բոլորովին ցանկալի է։ Կը զարգանար իմաստութիւնով ու հասակով, Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով։— Սբ. անմեղ ու անարատ, մեղաւորներէն զատուած։— Կը զարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն համար։— Սիրելով իրեններըՙ մինչեւ վերջն ալ սիրեց։— Ու իր անձը մեզի համար մատնեց։— Ինքզինք խոնարհեցուց մինչեւ մահուան հնազանդ եղաւ, ան ալ խաչին մահուան։ Ասոր համար Աստուած զԱնիկա բարձրացուց ու անոր անուն մը տուաւՙ որ ամէն անունէն վեր է, որ Յիսուսի անուան ամէն ծունկ չոքի... եւ ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աստուծոյ փառքին համար։
(Սաղ.ԽԵ.2։ Երգ.Ե.16։ Ղուկ.Բ.52։ Եբր.Է.26։ Ղուկ.Դ.22։ Յովհ.ԺԳ.1։ Եփ.Ե.2։ Փիլ.Բ.8—11։)

ՏՕՆԵՐ— 7 Աւետումն կոյս Մարիամու եւ գերեաց ազատութիւն (յԱմերիկա). 15 Տարեդարձ Հ. Բ. Ը. Մ. (1902). 16 Գուրպան Պայրամ Իսլամաց (4 օր). 24 Ազգ. Սգատօն ընդհ. նահատակաց եւ Երեւման Սբ. Խաչին:

# ՄԱՅԻՍ 1932 MAY

Սաղմոսերգուն.— *Դուն իմ Որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. խնդրէ ինծմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ, ու երկրի ծայրերը քեզի ստացուածք... Որդին համբուրեցէք որ չբարկանայ, ու ճամբուն մէջ չկորսուիք... երանի այն ամենուն որ Անոր կը յուսան։— Սաղմ. Բ.* 7, 8, 12։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| 1* | 2 | 3 | 4 | 5‡ | 6 | 7 |
| 8 | 9* | 10 | 11* | 12 | 13 | 14 |
| 15‡ | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 |
| 22 | 23+ | 24+* | 25 | 26 | 27 | 28+* |
| 29+ | 30 | 31 | | | | |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՄԱՐԴ Ի՞ՆՉՊԷՍ ՀԵՏԵՒԵԼՈՒ Է ԱՆՈՐ* 15—19) Ոսկ. համ.

1. *Ներողամիտ ըլլալ— — Մատթ. ԺԸ.* 21—35։ *Ղուկ. ԺԷ.* 3։
8. *Վստահելի » — — ԻԵ.* 14—28։ *Մատթ. ԻԵ.* 23։
15. *Առաջին առաքեալները— Գործ. Ա.* 1—9։ *Դ.* 31—37։ *Ե.* 12—16։ *Յովհ. ԺԳ.* 35։
22. » *Քրիստոնեաները- » ԺԱ.* 19—30։ *Կող. Գ.* 17։
29. » *Միսիոնարները— » ԺԳ.* 1—4, *Ա.* 13—16, 42—52։ *ԺԴ.* 21—28։ *Մարկ. ԺԶ.* 15։

## ՎԿԱՅՔ՝ ՅԻՍՈՒՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻ ԸԼԼԱԼՈՒՆ

*Հայրը — Սաղմ. Բ.* 7։ *Մատթ. Գ.* 17։
*Աշակերտները* — » *ԺԴ.*35։
*Պետրոս* — » *ԺԶ.*16։
*Հարիւրապետ* — » *ԻԷ.* 54։
*Դեւեր — Մարկ. Գ.* 12։
*Դիւահարը* — » *Ե.* 7։
*Գաբրիէլ — Ղուկ. Ա.* 35։
*Յովհաննէս Մկրտիչ— Յովհ. Ա.* 34։
*Նաթանայէլ* — » » 49։
*Մարթա* — » *ԺԱ.*27։
*Ներքինին — Գործ. Ը.* 37։
*Պօղոս — Ա. Կորն. Ա.* 19։

*Յովհաննէս— Յովհ. Ի.* 31։ *Ա Յովհ. Ե.* 12։

ՏՕՆԵՐ.— 1 Մանուկներու օր (յԱմեր.). 5 Համբարձում եւ Մուհարրեմ՝ տարեմուտ Իսլամաց. 9 Մայրերու օր (յԱմեր.). 11 Ժան տ'Արք (Ֆրանս.) 15 Հոգեգալուստ. 23 Սրբոց Հռիփսիմեանց. 24 Սրբոց Գայեանեանց եւ գերեզմանի օր (յԱմեր.). 28 Անկախ. Հայաստանի (1918) եւ ելն ի վիրապէն Ս. Գրիգոր Լուսաւորչի. 29 Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Էջմիածնի։

# ՅՈՒՆԻՍ 1932 JUNE

Փառաբանութիւն մը.— *Այդ մորթուած Գառնուկը արժանի է զօրութիւն, հարստութիւն, իմաստութիւն, կարողութիւն, և պատիւ ու փառք ու օրհնութիւն առնելու . . . Աթոռին վրայ նստողին ու Գառնուկին օրհնութիւն, պատիւ, փառք ու զօրութիւն յաւիտեանս յաւիտենից . . . Ամէն։ Յայտ. Ե.* 12, 13։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4+ |
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11+ |
| 12 | 13 | 14 | 15 | 16+ | 17 | 18 |
| 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 |
| 26 | 27 | 28 | 29 | 30 | | |

## *ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՄԱՐԴ Ի՞ՆՉՊԷՍ ՀԵՏԵՒԵԼՈՒ Է ԱՆՈՐ)*

| | | Ոսկ. համր. |
|---|---|---|
| 5. *Ափրիկէի առաջին միսիոնարութիւնը— —* | *Գործք. ԺԵ.* 21—41։ | *Յովհ. Գ.* 16։ |
| 12. *Աւետարանին ընթացքը փայլեցնել— —* | » *ԺԷ.* 10—18։ | *Գործք. ԺԷ.* 26։ |
| 19. *Զարիքին վրայ յաղթանակել— — — — —* | » *ԺԹ.* 8—20։ | *Եփես. Զ.* 12, 13։ |
| 26. *Յաջողութեան հոգին— — — — — —* | *Հռովմ. Ը.* 14—28։ | *Ա. Յովհ. Ե.* 4։ |

## ՅԻՍՈՒՍ ՄԻԱՅՆ

*Ամէն իշխանութեան Տէր— Մատթ. ԻԸ.* 18։
*Բարի Հովիւը— Յովհ. Ժ.* 11։
*Հովուապետ— Ա. Պետ. Ե.* 4։
*Եկեղեցիին գլուխ— Եփես. Ա.* 22։
*Հաւատարիմ և մեծ Քահանայապետ. Եբր. Բ.* 17։
*Մէկ Օրէնսդիր—* » *Դ.* 12։
*Հաւատքին առաջնորդ—* » *ԺԲ.* 2։

*Առաջնորդ ու Փրկիչ— Գործ. Ե.* 31։
*Միջնորդ և Բարեխօս— Ա. Տիմ. Բ.* 5։ *Եբր. Է.* 25։
*Փրկութիւն— Գործ. Դ.* 12։
*Քաւութիւն— Ա. Յովհ. Բ.* 2։
*Սուրբ, անմեղ և անարատ— Եբր. Է.* 26։
*Յաւիտ. և անանցանելի— Եբր. Զ.* 20։ *Է.* 24։
*Թգւր. Թգւրց. և Տէր Տէրանց— Յայտ. ԺԹ.* 16։

*—Հզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան։— Եսա. Թ.* 6։

ՏՕՆԵՐ.— 4 Սրբոյն Մեծն Ներսեսի. 11 Գիւտ Նշխարաց Սուրբ Գրիգոր Լուսաւորչի. 16 Սրբոց թարգմանչաց՝ Սահակայ եւ Մեսրոպայ:

# ՅԻՍՈՒՍԻ ՎՐԱՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԿԱՐԵՒՈՐ ԱՆՁԱՆՑ

—Յիսուս ամենէն կատարեալ էակն է որ երբէք կոխեց մեր երկրագունդին վրայ։

ՖՐԱՌՈՒՐ

—Յիսուս աննման և անհամեմատ կը մնայ աշխարհին մէջ, և անոր վրայ միացեալ կը գտնենք Աստուածային և մարդկային մեծութիւնը։

ՀԵԿԷԼ

—Եթէ Սոկրատայ կեանքն ու մահը իմաստնոյ մը կեանքն ու մահն էին, Յիսուսի կեանքն ու մահը Աստուծոյ մը կեանքն ու մահն էին։

ԺԱՆ ԺԱՔ ՐՈՒՍՕ

—Բաց ի Քրիստոսէ ուրիշ ո և իցէ անձի վրայ որչափ թերութիւններ կը գտնուին...։ Հնդկաց, Չինաց, Հռովմ. և այլ ազգաց օրէնսդիրներէն Լիկուրգոս, Նումա, Կոմփիւկոս եայլն, մեծ մարդեր էին, անոնց անիրաւութիւն չեմ ըներ, գիտեմ և կը յարգեմ անոնց արժէքը, ու անոնց և իմ մէջտեղ նմանութիւն մը կայ։ Անոնց տկարութիւններն ու սխալմունքները կը ցուցնեն թէ այն անցինք լոկ մարդ էին։ Բայց Յիսուս այնպէս չէ, Անոր վրայ ամէն բան հիանալի, Անոր միտքը կ'ապշեցնէ զիս, և կամքը կ'ամչցնէ զիս։ Յիսուս ո և իցէ մահկանացուի մը հետ բաղդատել անհնար է . . . ։

ՆԱԲՕԼԻՈՆ ՊՕՆԱՓԱՐԹ

—Մինչև 'ի լրումն ժամանակի բոլոր ողջամիտ մարդիկ պիտի խոնարհին Նազովրեցի Յիսուսին առջև

ՖԻՀԹԷ

—Քրիստոս բարձրագոյն տիպար է կրօնքի, որու կրնայ հասու ըլլալ մարդկային միտքը, և թէ կատարեալ բարեպաշտութիւն կարելի չէ առանձ Յիսուսի ներկայութեան մարդուս սրտին մէջ . . . ։ Աշխարհ բնաւ պիտի չմերժէ զՅիսուս։

ՇԹՐԱՈՒՍ

—Չկայ ազգ մը որ չաղօթէ առ Արարիչն յանուն Խաչելոյն Յիսուսի։

ՅՈՒՍՏԻԱՆՈՍ ՎԿԱՅ

— Տէր տուղիանոս կը գրէ Հռովմայեցի Կուսակալին—

Մենք Քրիստոնէայք դեռ երէկուան ենք, բայց և այնպէս կը լեցրնենք ձեր բոլոր հրապարակները, ձեր տուները, քաղաքները, կղզիները, դատարանները, նոյն իսկ ձեր բանակները, միայն ձեր մեհեանները թողած ենք ձեզի։

* * *

**ՅՈՒԼԻՍ** **1932** **JULY**

Աղաչանք մը.— *Ով Տէր, զիս փրկելու կամք ըրէ. ով Տէր, ինծի օգնելու արտորցիր։ Թող ամչնան ու մէկտեղ խայտառակ ըլլան իմ անձս փնտռողները՝ զանիկա կորսնցնելու համար եւ դառնան ու ամօթով ըլլան ինծի չարութիւն ուզողները . . . ամէն քեզ փնտռողները քեզմով թող ցնծան . . . — Սաղմ. Խ.* 13, 14, 16։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1 | 2 |
| 3+ | 4* | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 10 | 11 | 12 | 13 | 14* | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 24 / 31 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ԱՐԴԻ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ)*։ Ոսկ. համ.:

| | | |
|---|---|---|
| *3. Գերին ազատել։* | *— Ղուկ. Դ. 16—21։ Գաղ. Գ. 26—28։* | *Ղուկ. ԺԴ. 18։* |
| *10. Տղաքը Աստուծոյ առաջնորդել։* | *— Մատթ. ԺԸ. 1—6։ ԺԹ. 13—15։* | *Մատթ. ԺԹ. 14։* |
| *17. Լքեալներուն օգնել։* | *— Ղուկ. Ը. 36—50։* | *Ղուկ. ԺԹ. 10։* |
| *24. Ուրիշներուն ծառայել։* | *— Ղուկ. ԺԸ. 18—30։* | *Հռովմ. ԺԵ. 1։* |
| *31. Բանտարկեալները հոգալ։* | *— Մատթ. ԻԵ. 31—40։* | *Մատթ. ԻԵ. 40։* |

## ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԸ ԿԸ ՏԱՆԻ

| | | | |
|---|---|---|---|
| *Հիւանդութեան* | — *Բ. Մնաց. ԼԲ.* 25։ | *Աստուծոյ ցասումին* | — *Դան. Ե.* 1—31։ |
| *Խայտառակութեան* | — *Եսթ. Զ.* 10—13։ | *Անասնացման* | — » *Դ.* 28—33։ |
| *Թշուառութեան* | — *Յայտ. Գ.* 17։ | *Ջնջումի* | — *Երեմ. Ծ.* 29—32։ |
| *Անկումի* | — *Եզեկ. ԼԱ.* 10—14։ | *Կործանման* | — *Եսա. ԺԴ.* 12—19։ |
| *Փորձութեան* | — *Ա. Մնց. ԻԱ.* 1,3,7,8։ | *Սատակման* | — *Գործ. ԺԲ.* 21—23։ |
| *Կոտրումի* | — *Դ. Թագ. ԺԹ.* 35-37։ | *Անձնասպանութեան* | — *Բ. Թագ. ԺԷ.* 23։ |
| *Անպիտանութեան* | — *Երեմ. ԺԳ.* 9, 10։ | *Սոսկալի վախճանի* | — *Նէեմ. Թ.* 10։ |

ՏՕՆԵՐ— 3 Վարդավառ (Այլակերպութիւն Տեառն). 4 Անկախ. Մ. Նահանգաց Ամերիկայի. 14 Հանրապետութիւն Ֆրանսայի։

# ՕԳՈՍՏՈՍ 1932 AUGUST

Ստախօսներու համար.— *Ով Տէր, փրկէ իմ անձս սուտ շրթունքներէն, ու նենգաւոր լեզուէն։ Նենգաւոր լեզուն քեզի ի՞նչ կուտայ, և քեզի ի՞նչ կ'աւելցնէ։ Զօրաւոր մարդուն սուր նետերը, ու գիհիին կայծերը . . . ես խաղաղասէր էի, բայց երբ կը խօսէի, անոնք կռիւ կ'ընէին։— Սաղմ. ՃԻ. 2—4, 7։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6+ |
| 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13+ |
| 14+ | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| 28+ | 29 | 30 | 31 | | | |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՅՈՎՍԷՓ ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀԵԼԻ ԾԱՌԱՆ)։* Ոսկ. համ.:

| | | |
|---|---|---|
| 7. *Երազող տղան։* — — — — — — | *Ծննդ. ԼԷ. 1—36։* | *Սաղմ. ՃԻԸ. 8։* |
| 14. *Վստահելի ծառան։* — — — — — | » *ԼԹ. 1—6, 19—23, 40։* | *Առակ. ԺԶ. 3։* |
| 21. *Իմաստուն քաղաքագէտը։* — — — | » *ԽԱ. 1—57։* | *Ղուկ. ԺԶ. 10։* |
| 28. *Մեծ սիրտ եղբայրը։* — — — — — | » *ԽԵ. 42—44։* | *Մատթ. Զ. 14։* |

## ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| *—Արգիլուած* | — *Ղև. ԺԹ. 11։ Կող. Գ. 9։* | *—Սատանի գործիք* | — *Ծննդ. Գ. 6։* |
| *—Ատելի* | — *Առակ. ԺԳ. 5։* | — » *ծնունդ* | — *Յովհ. Ը. 24։* |
| *—Անվայել* | — » *ԺԷ. 7։* | *—Պատիժի ենթակայ* | — *Առակ. ԺԹ. 5։* |
| *—Պատճառ չարեաց* | — » *ԻԹ. 12։* | *—Վախճանը սոսկալի* | — *Սաղմ. ՃԻ. 2, 3։* |
| *—Ընկեր* » | — *Ովս. Դ. 1, 2։* | *—Պատուհաս* | — *Երեմ. Ծ. 36։* |
| *—Արգելք շնորհաց* | — *Եսա. ԾԹ. 1—3։* | *—Մահուան կը տանի* | — *Գործք. Ե. 5։* |
| *—Անվստահելի* | — *Սաղմ. ՃԱ. 7։* | *—Կորստեան* » » | — *Յայտ. ԻԱ. 8։* |

*Ձեր խօսքը ըլլայ այոն՝ այո, և ոչը՝ ոչ. ու ասկէ աւելին չարէն յառաջ կուգայ։ Մթ. Ե.37։*

ՏՕՆԵՐ.— 6 Եփեսոսի Սբ. Ժողովոյն՝ 200 Հայրապետաց. 13 Տօն Շողակաթի Սրբոյն Էջմիածնի. 14 Տօն Վերափոխման. 28 Սրբոյն Օգոստինոսի։

## ՍԵՊՏԵՄԲԵՐ 1932 SEPTEMBER

Խնդրանք մը.— *Ով Աստուած, քու ուխտերդ իմ վրաս են, Քեզի շնորհակալութիւններ պիտի հատուցանեմ։ Որովհետեւ իմ անձս մահուանէ ազատեցիր, ոտքերս ալ գայթակղելէն չե՞ս ազատեր, որպէս զի Աստուծոյ առջեւ քալեմ կենդանիներուն լոյսին մէջ։*
*Սաղմ. ԾԶ.* 12, 13։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3+ |
| 4 | 5 | 6 | 7 | 8+ | 9 | 10 |
| 11+ | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24+ |
| 25+ | 26 | 27 | 28 | 29 | 30 | |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ՄՈՎՍԷՍ ՈՒՂԻՆ ՑՏՆՈՂ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ)* Ոսկ. համ.

| | | |
|---|---|---|
| 4. *Ուսուցումը և կոչումը* — — — | *Ելից Բ.* 1—25։ *Գ.* 1—18։ | *Եբր. ԺԱ.* 24, 25։ |
| 11 *Իսրայէլի փրկիչը* — — — — | » *ԺԲ.* 21—39։ *ԺԳ.* 20—*ԺԴ.* 21։ | *Սաղմ. ՀԷ.* 19, 20։ |
| 18. *Անապատի վրանին մէջ պաշտամունք»* | *ԺԶ.* 1—15։ *ԺԹ.* 1—8։ *ԻԵ.* 1—22, 33։ | » *ՂԶ.* 8, 9։ |
| 25. *Լրտեսներու զեկուցը* — — — | *Թուոց ԺԳ.* 1—*ԺԴ.*9։ | *Բ. Օրին. ԼԱ* 6։ |

### ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| *Կեղծաւորութեան պատճառաւ—* | *Թուղ. ԼԱ.* 16։ | *Անհաւատութեան—* | *Ա. Կորն. Ա.* 23։ |
| *Հպարտութեան—* | *Ա. Մնաց. ԻԱ.* 1—8։ | *Մեծերու—* | *Եղ. ԼԲ.* 25։ *Դ. Թագ. ԺԲ.* 30։ |
| *Զարութեան—* | *Եսա. Ը.* 14, 15։ | *Կռերաց—* | *Եսա. ԾԶ.* 10—12։ *Մաղ. Բ.* 8։ |
| *Հալածանքի—* | *Մատթ. ԺԳ.* 21։ *ԻԴ.* 10։ | *Վայեր—* | *Երեմ. ԻԳ.* 1։ *Մտթ. ԺԸ,* 7։ |
| *Ազգատութեան—* | *Մատթ. ԺԳ.* 57։ | *Սպառնալիք—* | *Մատթ. ԺԸ.* 6։ |
| *Անօրէնութեան —* | » *ԻԴ.* 12։ | *Պատիժ—* | *Ա. Թագ. Բ.* 30—34։ |
| *Տգիտութեան—* | *Յովհ. Զ.* 61, 67։ | *Անէծք—* | *Երեմ. ԻԳ.* 10—15։ |

ՏՕՆԵՐ.— 3 Նիկիոյ Սբ. Ժողովոյ՝ 318 Հայրապետաց. 8 Ծնունդ Սբ. Կոյս Մարիամայ. 11 Խաչվերաց. 24 Սբ. Գէորգ. 25 Վարագայ խաչ։

# ԽԻՂՃԸ

«Հայաստանի Կոչնակ» 1927, էջ 1519

— Ո և է լեզուի մէջ խիղճ բառը ամենէն զօրեղ բառն է։

— Խիղճը մարդուն մէջ այն կարողութիւնն է որ կը դատապարտէ չար արարքները։

— Խիղճը այն պահապանն է որմէ ոչ ոք կրնայ խոյս տալ. դատապարտեալը իր խցիկին մէջ կ'սպասէ անոր վճիռին, եսապաշտ, քարսիրտ հարուստը իր պալատին մէջ կարող չէ խուսափիլ անոր վճիռէն։ Քաղաքակիրթ և վայրենի մարդոց «մի՛ ըներ» արգելիչ հրամաններ կուտայ։

— Ամէն կրօնք խղճին կազմակերպ արտայայտութիւնն է։

— Խիղճը լռիկ և յաճախ ուժգին ձայն մ'է, իբրև որոտում, կ'ահաբեկէ, կը խելագարէ կամ կը բարախէ մարդը։ — Խղճին տանջանքը մարդուն դժոխքն է։

— Խիղճը Աստուծոյ պատգամն է, Անոր պատգամաւորն է մարդուն ներքնաշխարհի մէջ։

— Խիղճը Աստուծոյ մեղմ մրմունջն է մարդուն մէջ։

— Խիղճը կը կոչուի,

Աստուծոյ փոխանորդ — Բանականութեան բազկերակ — Իմաստուն ղեկավար — Առաքինութեան պահապան զինուոր — Արդարութեան ատեան — Երկնից լուսաղոյն հայելին — Ամենախիստ բանտապետ — Նուիրական սրբավայր մը՝ ուր Աստուած միայն կրնայ մտնել իբրև դատաւոր — Անծանօթին կողմնացոյցը — Ուղիղին ռահվիրան։

— Շատեր ի զուր փորձած են խեղդել խիղճը արբեցողութեան մէջ, կամ մեռցնել զայն անառակ՝ անբարոյական կեանքի թմբրադեղերով, սակայն խիղճը չի մեռնիր երբեք, ան կ'ապրի։

— Խիղճը կեանքի ծովուն վրայ նաւը վարող կողմնացոյցն է, երբ մարդ չանսայ անոր ազդարարութեան՝ կը յանդիպի նաւաբեկութեան։

— Խղճի խայթը յանձապարտին պատիժն է։

(Թարգմ. Կ. Յ. Պ.)

## ՀՈԿՏԵՄԲԵՐ 1932 OCTOBER

Դաւիթի աղօթքը.— Շատ են սքանչելիքներդ զորոնք դուն ըրեր ես, ով իմ Տէր Աստուած, ու մեր վրայ ունեցած խորհուրդներդ մէկը չկրնար կարգաւ պատմել քու առջեւդ, պիտի պատմէի ու խօսէի, բայց համրանքէն աւելի շատ են . . . բայց ես աղքատ ու տնանկ եմ, սակայն Տէրը հոգ կը տանի ինծի։— Սաղմ. Խ. 5, 17,

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 1 |
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8+ |
| 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 23+ / 30 | 24 / 31 | 25 | 26 | 27 | 28 | 29+ |

ԿԻՐ. ԴԱՍԵՐ. — (ԵԿԵՂԵՑԻԻՆ ԵՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ) Ոսկ. համ.

2. Կափառնայումի մէջ Յիսուս կը — Բ. Օրին. Բ. 16—37; Հռ. 1—23; ԼԴ; — Բ. Օրին. ԼԴ. 10,

9. Քրիստոնէական առ. Եկեղեցին— Գործք. Բ. 1—4, 46, 47։ Դ. 1—16։ Դ. 33—35, Յովհ. ԺԷ. 20, 21։

16. Աղօթքի ոյժը— — — — — » Դ. 1—3, 18—31։ ԺԲ. 1—17։ Փիլ. Դ. 6։

23. Գովեստի երգեր— — — — » ԺԶ. 11, 12, 19—34։ Սաղմ. ՂԲ. 1, 2։
(Տէրունական ընթրիքը)

30. (ա) Յիսուս և առաքեալները— — Ղուկ. ԻԲ. 7—15, 19, 20, 24—27։ Յվհ. ԺԳ. 4, 5, 12—17։ Ղկ. ԻԲ. 19։

### ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆԸ

| | | | |
|---|---|---|---|
| Ապահովութիւն է — | Սաղմ. ԽԱ. 1, 2։ | Տէրոջը ընել է — | Մատթ. ԻԵ. 40։ |
| Յաջողութիւն է — | » ՃԺԲ. 5—9։ | Լոյս կը պատճառէ — | Եսա. ԾԸ. 8, 10։ |
| Օրհնութիւն է — | Առակ. Գ. 9, 10։ | Վարձք կ'առնէ — | Մատթ. Ժ. 42։ |
| Երանութիւն է — | » ԺԴ. 21։ | Գանձ է երկնային — | » ԺԹ. 21։ |
| Բժշկութիւն է — | Եսա. ԾԸ. 8։ | Աստուծոյ նմանիլ է— | Ղուկ. Զ. 36։ |
| Երջանկութիւն է — | Եսա. ԾԸ. 10—12։ | Պատարագ մըն է — | Եբր. ԺԳ. 16։ |
| Տէրոջը փոխ տալ է— | Առակ. ԺԹ. 17։ | Ճշմարիտ սէր է — | Ա. Յովհ. Գ. 17, 18։ |

ՏՕՆԵՐ.— 8 Տօն համայն սրբոց թարգմանչաց մերոց. 23 Գիւտ խաչ. 29 Սրբոյն Յովհան Ոսկեբերանի:

# ՆՈՅԵՄԲԵՐ 1932 NOVEMBER

Գոհաբանական մը.— *Ով Աժ., ի՜նչ գերազանց է քու գթութիւնդ, որ մարդոց որդիք քու թեւերուդ հովանաւորութեանը կ'ապաւինին։ Անոնք քու տանդ պարարտութենէն պիտի կշտանան, քու հաճութիւններուդ գետէն պիտի խմցնես անոնց։ Սաղմ. ԼԶ. 7—8։*

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | 11* | 12 |
| 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| 20+ | 21+ | 22 | 23 | 24* | 25 | 26 |
| 27 | 28 | 29 | 30 | | | |

| ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐ.— | Ոսկ. համ.: |
|---|---|
| 6. (բ) Իբր ընկերութիւն — — Յովհ. ԺԴ. 34, 35։ ԺԴ. 15—21։ Ղուկ. Զ. 36։ | Կող. Գ. 13։ |
| 13. (գ) » Զոհ— — — — — Յովհ. ԺԲ. 23—32։ ԺԴ. 10—15։ | Ա. Յովհ. Գ. 16։ |
| 20. (գ) » Նուիրում — — — Ղուկ. ԻԲ. 12—19։ Յայտ. Բ. 10։ Մատթ. ԻԴ. 13։ | Յայտ. Բ. 10։ |
| 27. Ժուժկալութեան դաս— (Անձնուրացութիւն ուրիշներու սիրոյն). Հռով. ԺԴ։ | Յովհ. ԺԷ. 19։ |

## ԹԱՔՈՒՆ ԳԱՆՁԵՐ (Հռովմ. ԺԲ. 8-18։ Ա. Թես. Ե. 16-23)։

*Սէրը առանց կեղծաւորութե. ըլլայ— Չարէն զզուելով՝ բարիին յարելով— Եղբայրսիրութե. մէջ... գորովալից եղէք— Պատուելու մէջ իրարմէ անցէք— Ջանքի մէջ թուլասիրտ չըլլաք— Հոգիով բորբոքեցէք, Տէ. ծառայեցէք— Յուսով ուրախ եղէք— Նեղութե. մէջ համբերեցէք— Ստէպ աղօթքի կեցէք— Սուրբոց պիտոյից հաղորդեցէք— Հիւրասիրութե. ետեւէ եղէք— Ձեզ հալածողները օրհնեցէք... մի անիծէք— Խնդացողներուն հետ խնդացէք, լացողներու հետ լացէք— Իրարու վրայ միեւնոյն խորհուրդ ունեցէք— Ամբարտաւանութի. մի ընէք, խոնարհներու հետ խոնարհեցէք— Ինքզինքնիդ իմաստունի տեղ մի դնէք— Չարութե. փոխարէն... մի հատուցանէք— ...Բարի բաներ ընելու հոգ տարէք— ...Մարդոց հետ խաղաղութի. ունեցէք— Ամէն ատեն ուրախ եղէք— Անդադար աղօթք ըրէք— Ամէն բանի մէջ գոհութի. տուէք... Սբ. Հոգին մի մարէք— Մարգարէութ. մի արհամարհէք — Ամէն բան փորձեցէք, բարին ամուր բռնեցէք— Ամէն տեսակ գէշ բաներէն ետ կեցէք։—*

* * *

*Եւ ինք՝ խաղաղութեան Աստուածը ձեզ բոլորովին սուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին եւ շունչը ու մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու ատենը։*

ՏՕՆԵՐ.— 11 Ընդհ. Զինադադար. 20 Յիսնակաց բարեկենդան. 21 Ընծայումն Սրբոյն Մարիամայ. 24 Շնորհակալութեան օր (յԱմերիկա)։

# ԴԵԿՏԵՄԲԵՐ 1932 DECEMBER

Դաւիթի աղօթքը.— *Ցուցուր ինծի, ով Տէր, իմ վերջս, և օրերուս չափը որ՛չափ է, որ գիտնամ թէ ինչպէս անցաւոր եմ։ Փրկէ զիս իմ յանցանքներէս . . . իմ արցունքներուս մի լռեր, վասնզի պանդուխտ մըն եմ ես . . . Թոյլտուութիւն ըրէ ինծի ու զուարթանամ, քանի որ չեմ գացեր այն տեղը որ ալ պիտի չգտնուիմ։ Սաղմ. ԼԹ.* 4, 8, 12, 13։

| ԿԻՐ. SUN. | ԲՇ. MON. | ԳՇ. TUES. | ԴՇ. WED. | ԵՇ. THR. | ՈՒՐ. FRI. | ՇԲ. SAT. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1 | 2 | 3+ |
| 4* | 5 | 6 | 7 | 8 | 9+ | 10+ |
| 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 |
| 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25++ | 26+ | 27+ | 28 | 29+ | 30 | 31 |

*ԿԻՐ. ԴԱՍԵՐ.— (ԱՆՆԿԱԼՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՔԱՂԱՔԸ)* Ոսկ. համ.

| | | |
|---|---|---|
| 4. *Գերութենէն ազատուած քաղաքը—* | *Դ. Թագ. ԺԸ.* 1-7, 13-20, 28-37։ *ԺԹ.* 1-20, 32-36։ | *Առակ. ԺԶ.* 7։ |
| 11. *Քաղաքէն վռնտուած— — — —* | *Բ. Մնաց. ԼԶ.* 11—20։ *Երեմ.* 32—42։ | *Սաղմ. Ծ.* 15։ |
| 18. *Քաղաք վերադարձը— — — —* | *Եզրաս Ա.* 1—8։ *Դ.* 1, 2, 10—15։ | » *ԾԻԶ.* 5։ |
| 25. *Թագաւորը որ գալու էր— — —* | *Եսա. Թ.* 6, 7։ *Երեմ. ԻԳ.* 5, 6։ *Մատթ. Բ.* 1—6։ | *Եսա. ԼԲ.* 1։ |

## ԱՐԹՈՒՆ ԿԵՑԷՔ

*—Վասնզի չէք գիտեր թէ որ ժամուն ձեր Տէրը կուգայ։— Վասնզի ոչ օրը գիտէք և ոչ ժամը։— . . . Աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք։— . . . Ամէն ատեն աղօթք ըրէք որ արժանի ըլլաք այն բոլոր ըլլալու բաներէն ազատուելու, և Որդին Մարդոյ առջևը կայնելու։— . . . Ամէն բանին վախճանը մօտեցեր է, ուստի զգաստ եղէք ու աղօթքի մէջ արթուն կեցէք։— . . . Հսկեցէք, վասնզի ձեր հակառակորդը, Սատանայ, մռնչող առիւծի պէս կը պտըտի, ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ։— . . . Հաւատքի մէջ հաստատ կեցէք, ժիր եղէք, զօրացէք։— Ինչ որ կ'ըսեմ ձեզի, ամէնուդ կ'ըսեմ, արթուն կեցէք։—*
(*Մատթ. ԻԴ.* 42։ *ԻԵ.* 13։ *ԻԶ.* 41։ *Ղուկ. ԻԱ.* 36։ *Ա. Պետ. Դ.* 7։ *Ե.* 8։ *Ա. Կորն. ԺԶ.* 13։ *Մարկ. ԺԳ.* 37։)

ՏՕՆԵՐ.— 3 Սրբոցն Թադէի եւ Բարթուղիմէի. 4 Ոսկ. Կանոնի օր — Որբերու Կիրակին. 9 Յղութիւն Սբ. Մարիամայ. 10 Սրբոյն Յակոբայ. 25 Ծնունդ Յս. Քսի. (ըստ լատ). 26 Սբ. Ստեփաննոս նախավկային, 27 Սրբոցն Պետրոսի եւ Պօղոսի, 29 Սրբոցն Յկբ.ի եւ Յովհ.ու:

# ԿՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

## —Քրիստոնեաներուն աճումը.

| | | |
|---|---|---|
| Քրիստոսի համբարձման ատեն կային աւելի քան | 500 | անձ |
| Պենտեկոստէի շաբթուն մէջ եղան | 5,500 | » |
| Ա. Դարուն վերջերը եղան | 5,000,000 | » |
| Գ. » » » | 50,000,000 | » |
| Ժ. » » » | 100,000,000 | » |
| ԺԵ. » » » | 200,000,000 | » |
| Ի. » սկիզբը » | 500,000,000 | » |

## —Չինաստանի մէջ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1877ին | 473 | միսիօնար կար, | 774 | ընիկ օգնականներով։ | |
| 1890 » | 1,296 | » » | 1,657 | » | » |
| 1907 » | 3,445 | » » | 9,905 | » | » |
| 1912 » | 5,411 | » » | 15,304 | » | » |

## —Ճաբոնի մէջ

46 տարի առաջ հազիւ 1 եկեղեցի կար, 1914ին 1600 եկեղեցի կար, որոնց 174ը ինքնապահ եղան, 665 ընիկ երեցներով, 1850 Կիրակնօրեայ Դպրոցներով և 100,000 անդամներով։

## —Կիրակնօրեայ դպրոցներու

1780ին ա. դասը սկսաւ Ռոպըրթ Րէյքս (յԱնգղ.)։
1913ին մօտ 298,000 Դպրոց կար ընդհ. աշխարհին մէջ՝ 28,700,000 աշակերտներով։

## —Ջանասիրաց երկսեռ ընկերութիւնը

1881ին Անգղ. Ֆրանսիս Քլարքին նախագահութեամբը կազմուեցաւ, ու հիմա՝
117 երկիրներու մէջ կը գտնուի
80,067 ընկերութիւններ
4 միլիոն դեռատի երկսեռ անդամներով։

«Ձեզի կ'ըսեմ, եթէ ասոնք լռեն՝ քարեր պիտի աղաղակեն: Ղուկ. ԺԹ. 40:

ՀՀ Ազգային գրադարան
NL0151232